

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետը Իր երրորդ այցելությունը շնորհեց Շիրակի թեմին մայիսի 8—10 օրերին:

Հայրապետական սույն այցելության ժամանակ Հայոց Հայրապետին ուղեկցում էին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի հայոց ս. Հակոբյանց վանքի միաբան և պատրիարքարանի դիվանապետ տ. Շահե եպս. Անեմյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Վահան եպս. Տերյանը, գավազանակիր տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը, Դավիթ սրկ. Դիլանյանը, Արարատ սրկ. Գալստյանը, Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանն ու «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը:

Շաբաթ օրը, մայիսի 8-ին, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը ժամանում է Լենինական և «Հրաշափառ»-ով մուտք գործում ս. Աստվածածին եկեղեցին, ուր ողջունում և օրհնում է հավատացյալների հոծ բազմությանը: Եկեղեցում Հայոց Հայրապետին բարի գալուստ է մաղթում Շիրակի թեմի առաջնորդ տ. Մաշտոց եպս. Թաջիրյանը:

Հայոց Հայրապետի ժամանումը Լենինական ողջունում է Լենինականի քաղաքային խորհրդի նախագահի տեղակալ պրն. Հովհաննես Հովհաննիսյանը:

Ժամը 16-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով պաշտոնական այցելություն է տալիս Լենինականի քաղաքային խորհուրդ:

Լենինականի քաղաքային խորհրդի նախագահ պրն. Սուրեն Մատնիշյանը, շրջապատված քաղաքային խորհրդի բաժանմունքների վարիչներով, բարիգալստյան սրտագին խոսքերով ողջունում է Վեհափառ Հայրապետին, որը նույնքան սրտագին խոսքերով Իր բարեմաղթություններն ու օրհնությունն է բերում պրն. նախագահին, բաժնի վարիչներին և Լենինական քաղաքին:

Ընդունելությանը ներկա է լինում նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Սարգիս Գասպարյանը:

Հայոց Հայրապետի բարձր պատվին Լենինականի գործադիր կոմիտեն ժամը 16.30-ին մեծ դահլիճում հյուրասիրություն է կազմակերպում: Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետը և պարոն նախագահը ճառեր են փոխանակում հայրենասիրական խանդավառ մթնոլորտում:

Ժամը 18-ին Վեհափառ Հայրապետը ս. Աստվածածին եկեղեցում նախագահում է կիրակամտի ժամերգությանը:

Մայիսի 9-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայրապետը հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Լենինականի հայոց ս. Աստվածածին եկեղեցում և Բանին կենաց քարոզությամբ մխիթարում Իր հավատացյալ զավակներին, որոնք հոծ բազմությամբ լցրել էին եկեղեցին և շրջափակը:

Ժամը 15-ին Ծիրակի թեմի թեմական ու եկեղեցական խորհուրդները Հայոց Հայրապետի բարձր պատվին «Անի» ճաշարանի շքեղ սրահում կազմակերպում են պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա են լինում նաև քաղաքային խորհրդի պաշտոնական անձնավորություններ:

Ընդունելության ժամանակ փոխանակվում են ջերմ, հուզիչ ճառեր:

Մայիսի 10-ին, երկուշաբթի օրը, կեսօրվա ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով հովվապետական այցելություն է տալիս Կիրովական քաղաքին:

Նորին Սրբությունը իջևանում է «Գուգարք» հյուրանոցը և ժամը 13-ին պաշտոնական այցելություն տալիս Կիրովականի քաղաքային խորհուրդ, ուր Հայոց Հայրապետը և քաղաքային խորհրդի նախագահի տեղակալ պրն. Վլադիմիր Ավետիսյանը ողջույնի և բարիգալստյան սրտագին խոսքեր են փոխանակում: Ընդունելությանը ներկա է նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Սարգիս Գասպարյանը:

Ժամը 14-ին Կիրովականի քաղաքային խորհուրդը Հայոց Հայրապետի բարձր պատվին կազմակերպում է ընդունելություն «Կիրովական» ճաշարանում, ուր հայրենասիրական ջերմ մթնոլորտում ճառեր են փոխանակվում:

Ժամը 18-ին Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք է գործում Կիրովականի հայոց ս. Աստվածածին եկեղեցին և նախագահում երեկոյան ժամերգությանը: Եկեղեցական արարողության ավարտին հայրապետական Իր ողջույնն ու օրհնությունը բաշխելով, Նորին Սրբությունը մխիթարում է Իր հոգևոր զավակներին:

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ է վերադառնում մայիսի 10-ին, երեկոյան ժամը 20-ին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

14-ը մայիսի 1971 թ.,
Ս. Էջմիածին